«Աւելի լայնօրէն ծանօթացնելու համար Զէյթունի կեանքը հայ հասարակութեան, յարմար դատեցի անհատական քաջագործութիւններու մէկ քանի օրինակներ դնել քիչ մը ընդարձակ կենսագրութիւններով, ինչպէս Տէլի-Քեչիշ, տէր-Օհանի և Դաւիթ վարդապետի, որոնք աւելի լոյս կ'սփռեն և որոշ գաղափար կուտան Զէյթունցիի բնաւորութեան և յանդգնութեան, անոնց ասպետական ըմբռնումներուն, կրօնական համոզմունքին վրայ։ Այնպէս որ այդ անհատական պատկերները կարող են առատ նիւթ և բաղդատութեան ընդհանուր եզրեր հայթայթել Զէյթունը ուսումնասիրել ուզողներուն համար...» Միանգամայն ճիշտ դիտողութիւն, որ իրաւացի կարող է համարուել նաև ամբողջ գրքի վերաբերմամբ։

Զէյթունցիի աշխատութիւնը շատ գնահատելի է ու հետաքրքրաշարժ և՝ իբրև հում նիւթ։ Արժէ ծանօթանալ այդ նիւթի հետ, արժէ կարդալ այդ աշխատութիւնը։

Գրքին կցուած են Ֆանուզի վանահայր, նշանաւոր հերոս Բարդուղիմէոս վարդապետի երկու պատկերները։

Ե. Թ.

Ա-Դ0, «ՄԱԿԵԴՈՆԻԱ», 1903 թ. Ս.-Պետերբուրգ. 22 երես, գինը 7 կոպ.

Մի փոքրիկ գրքոյկ է սա, որ հակիրճ տեղեկութիւններ է տալիս մակեդոնացիների և մակեդոնական հարցի մասին։

Մակեդոնական շարժումը միայն մի օղակ է այն ընդհանուր շղթայի մէջ, որ միացնում է հայկական, ալբանական, քիւրդական և երիտասարդ թիւրքերի հարցերը, որ վաղուց արդէն յայտնի է «արևելեան հարց» անունով։ Այս ընդհանուր հարցը պարզելու համար անպայման հարկաւոր էր առաջ քաշել Թիւրքիայի անցեալը, պետական բռնակալ բեժիմը. հարկաւոր էր քննել չարիքների բուն արմատը՝ երկրի տնտեսական սոցիալական քայքայումը և դրա շարժառիթ պատճառները։

Բայց հեղինակը հեռու է եղել այդպիսի լայն նպատակից, ուստի բաւականացել է միայն մի քանի թռուցիկ տեղեկութիւններ հաղորդելով Մակեդոնիայի տեղագրութեան, տարածութեան, բնական կարողութիւնների, պատմական անցեալների մասին։

Բարեբախտաբար նա կարողացել է այնպէս չաղկապել այդ տեղեկութիւնները, այնպիսի ձևով արտայայտել, որ գրքոյկը կարդացւում է հետաքրքրութեամբ։

Առանձնապէս ուշագրաւ է այն կէտը, որով պ. Ա-Դ0ն

ցոյց է տալիս վերջին ժամանակներս մակեդոնացիների և հայերի մէջ տեղի ունեցած մերձեցումը և համերաշխ ջանքերով ընդհանուր թշնամու դէմ կուռելու փորձերը։

Մակեդոնիայի համար «շուտով կը բացուի ցանկալի առաւօտը, բացականչում է իր գրքոյկի վերջում. այդ առաւօտը, հեռու չէ»։

Իսկ մենք կարծում ենք,- որ անհիմն է այդ լաւատես հայեացքը, քանի որ այժմեան քաղաքական աշխարհը բոլորովին այլ երգ է երգում, քանի դեռ շատ մութ-մութ գիշերներ պիտի անցնեն, դեռ շատ արիւն պիտի հոսէ մինչև այդ առաւօտը հեռու է նա և անյայտութեան քողով ծածկուած։

Ե. Թ.

Մ. Պէշիկթաշլեան, ՏԱՂԵՐ, հեղինակի պատկերով և Ղէօլ առաջաբանով, Թիֆլիս, 1903 թ. գինը 40 կոպ.

Հայ նշանաւոր բանաստեղծ Մ. Պէշիկթաշլեանի «Տաղերը» 33 տարուց յետոյ արժանանում են երկրորդ տպագրութեան։ Այդ նոր հրատարակութիւնը ցանկալի էր տեսնել աւելի խնամքով կատարուած, քան ներկայացնում է մեզ. ընթերցողին չի տրւում ոչ մի կենսագրական տեղեկութիւն բանաստեղծի մասին, անյայտ են մնում նոյն իսկ նրա ծննդեան և մահուան թուականները։ Վատ չէր լինի, եթէ գրքոյկին կցած լինէր Պէշիկթաշլեանի մասին եղած գրականութեան համառօտ ցուցակը։ Վրիպակների թիւը բաւական պատկառելի չափ է ստացել։ Պէշիկթաշլեանի «Տաղերի» մէջ մի 4—5 իսկական բանաստեղծական գոհարներ կան, մնացածը ըստ արժանւոյն մոռացուած են և միմիայն նշանակութիւն կ'ունենային հեղինակի երկերի լիակատար հրատարակութեան մէջ։ Սակայն այդպիսի մի հրատարակութիւն լուրջ կերպով իրագործելու համար պահանջւում է աւելի մեծ խնամք և պատրաստութիւն, քան այդ երևում է ներկայ գրքոյկը հրատարակողների մէջ։

Na.

ՄԵՂՈՒԱԲՈՒԵՈՒԹԻՒՆ. կազմեց Գ. Ղազարեան, նկարներով. Վաղարշապատ, 1903.

Գիւղատնտեսութեան ինչպէս միւս ճիւղերը, այնպէս էլ մեղուապահութիւնը դարերից ի վեր ոչ մի քայլ առաջ չէ գնա-